

Կանոնակարգ

Դրամական միջոցների հավատարմագրային կառավարման

- 1.1. «Վիլկո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն» և/կամ «Կառավարիչ») Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:
- 1.2. Ընկերության վավերապայմաններն են՝
 - 1.2.1. Անվանումը՝ «Վիլկո» ՍՊԸ
 - 1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ **Համար 0008**
 - 1.2.3. Հասցե՝ **ՀՀ, ք. Երևան 0002, Սարյան փ. 26/2**
 - 1.2.4. Կայք՝ **wilco.am**

2. Հիմնական հասկացություններ

- 2.1. Դրամական միջոցների հավատարմագրային կառավարման սույն կանոնակարգում (այսուհետ՝ «Կանոնակարգ») օգտագործվող հասկացությունները, եթե դրանք սահմանված չեն Կանոնակարգում, մեկնաբանվում են այն նշանակությամբ, որը սահմանված է ՀՀ օրենքներում և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ վերջիններին կողմից սահմանված չլինելու դեպքում կիրառվում է միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:
- 2.2. **Ընկերություն** և/կամ **Կառավարիչ**՝ «Վիլկո» ՍՊԸ.
- 2.3. **Հաճախորդ**՝ ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում Ընկերության կողմից մատուցվում են Կանոնակարգով սահմանված ծառայությունները.
- 2.4. **Ճահառու**՝ Անձ, ի շահ որի իրականացվում է Հավատարմագրային կառավարումը,
- 2.5. **Գործընկեր**՝ անձ՝ ներառյալ առանց սահմանափակման բրոքերներ, պահառուներ, ներդրումային կամ ֆինանսական կազմակերպություններ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը Ծառայություններ է մատուցում Հաճախորդին.
- 2.6. **ՀՀ ԿԲ**՝ Հայաստանի Հանրապետության Կենրոնական Բանկ.
- 2.7. **Տեղեկատվության փոխանակման միջոցներ**՝ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում ամրագրված կապի միջոցներ.
- 2.8. **Դրամական միջոցներ**՝ Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող կանխիկ և/կամ անկանխիկ գումար.
- 2.9. **Հավատարմագրային կառավարում և/կամ Ծառայություն**՝ Ընկերության կողմից վարձավճարի դիմաց իր տիրապետմանը հանձնված Դրամական միջոցների, Հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական

միջոցների կառավարումը՝ Հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն, ի շահ Հաճախորդի կամ նրա կողմից նշված երրորդ անձի:

- 2.10. **Հավատարմագրային կառավարման օբյեկտ**՝ Հաճախորդի սեփականությունը հանդիսացող դրամական միջոցներ, որոնք տրվել են Կառավարչի Հավատարմագրային կառավարմանը, ինչպես նաև բոլոր այն արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները և դրամական միջոցները, որոնք Կառավարչի կողմից ձեռք են բերվել Հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության արդյունքում և սեփականության իրավունքով պատկանում են Հաճախորդին,
- 2.11. **Պայմանագիր**՝ Հավատարմագրային կառավարման ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է Հաճախորդի Դրամական միջոցների Հավատարմագրային կառավարման կապակցությամբ կողմերի իրավահարաբերությունները, սահմանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում է օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմանները:
- 2.12. **Ներդրումային հայտարարագիր**՝ Պայմանագրի շրջանակներում Հավատարմագրային կառավարման օբյեկտ հանդիսացող դրամական միջոցների ներդրման ուղղությունները, պայմաններն ու կարգը, այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները սահմանող փաստաթուղթ:
- 2.13. **Ռիսկերի վերաբերյալ հայտարարագիր**՝ Հաճախորդի կողմից ստորագրվող փաստաթուղթ, որը նկարագրում է Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման ժամանակ ի հայտ եկող որոշակի դեպքեր, իրավիճակներ և գործընթացներ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել Հաճախորդի ակտիվների կորստի:
- 2.14. **Հաշվետու ժամանակաշրջան**՝ ամիս: Կողմերի համար առաջին հաշվետու ամիս է համարվում Պայմանագիրը կնքելու օրից մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
- 2.15. **Կիրառելի օրենսդրություն**՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ԿԲ կանոնակարգեր ինչպես նաև Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական փաստաթղթերի և համապատասխան Պայմանագրի դրույթներ:

3. Ընդհանուր դրույթներ

- 3.1. Կանոնակարգը սահմանում է Ընկերության կողմից Հաճախորդին պատկանող Դրամական միջոցները Հավատարմագրային կառավարման ընդունելու գործընթացը՝ ելնելով Ընկերության սահմանած հավատարմագրային կառավարման նվազագույն պայմաններից և գործող օրենսդրության պահանջներից: Դրամական միջոցների Հավատարմագրային կառավարման ընդունումը չի ենթադրում դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Ընկերությանը:
- 3.2. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպություն և գործում է վերջինիս վերահսկողության ներքո:

- 3.3. Կանոնակարգը կազմված է և կարգավորվում է Կիրառելի օրենսդրությանը համապատասխան և շրջանակներում:
- 3.4. Կանոնակարգը հանդիսանում է հրապարակման ենթակա փաստաթուղթ, որը հասանելի է ցանկացած շահագրգիռ կողմի՝ ծանոթանալու նպատակով: Կանոնակարգը տեղադրվում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:
- 3.5. Կանոնակարգի յուրաքանչյուր դրույթ մեկնաբանվում է դրա բառացի շարադրանքի հիման վրա: Եթե որևէ դրույթի կոնկրետ շարադրանքը պարունակում է երկիմաստություն, ապա այդ դրույթները մեկնաբանվում են Պայմանագրի, Կանոնակարգի և Ընկերության ներքին իրավական ակտերի ընդհանուր տրամաբանության շրջանակներում:
- 3.6. Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին ծանուցելու պայմանով: Կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները Կանոնակարգի անբաժանելի մասն են:

4. Հաճախորդներից պահանջվող տեղեկատվության կազմը

- 4.1. Ընկերությունը պարտավոր է պահանջել Հաճախորդից տեղեկատվություն նրա ներդրումային ոլորտում ունեցած գիտելիքների և փորձի, ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների վերաբերյալ: Այս տվյալները անհրաժեշտ են, որպեսզի Ընկերությունը կարողանա Հաճախորդին առաջարկել այնպիսի ներդրումային ռազմավարություն, որը լավագույնս կհամապատասխանի նրա պահանջներին և նպատակներին: Եթե նշված տեղեկատվությունը չի տրամադրվում, Ընկերությունը չի կարող Հաճախորդին հորդորել կատարել ներդրումներ:
- 4.2. Ընկերությունը Հաճախորդից կարող է պահանջել, ներառյալ առանց սահմանափակման հետևյալ տեղեկատվությունը՝
 - 4.2.1. Ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկություններ,
 - 4.2.2. Ներդրումային նպատակների մասին տեղեկություններ,
 - 4.2.3. Ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ:
- 4.3. Ընկերությունը հիմնվելու է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:
- 4.4. Հաճախորդը պարտավոր է իր կողմից նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում տեղեկացնել Ընկերությանը՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ

- 5.1. Հիմք ընդունելով Կիրառելի օրենսդրությունը, ինչպես նաև Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը, Կառավարիչը ստորև ներկայացնում է Հաճախորդի դասակարգման չափանիշները և վերջինիս դասակարգումը՝ որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ:
- 5.2. Պրոֆեսիոնալ հաճախորդ են համարվում
 - 5.2.1. ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն:
 - 5.2.2. Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը:
 - 5.2.3. միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը:
 - 5.2.4. իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
 - ա) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
 - բ) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,
 - գ) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:
- 5.3. Հաճախորդի նախաձեռնությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել սույն կարգի 5.2. կետում չնշված այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
 - 5.3.1. հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

- 5.3.2. հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
- 5.3.3. հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:
- 5.4. Հաճախորդի՝ պրոֆեսիոնալ հաճախորդի կարգավիճակի համապատասխանությունը գնահատելու նպատակով, Կառավարիչը առաջարկում է հետևյալ հարցերի շրջանակը՝ հաճախորդի ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշումներ կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու ունակությունն ու գիտելիքները որոշելու համար.
- 5.4.1. Կրթության, որակավորման և մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվություն,
- 5.4.2. Լեզուների իմացություն,
- 5.4.3. Վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ կազմակերպության տվյալները, պաշտոնը, հիմնական պարտականությունները, ազատման հիմքերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն,
- 5.4.4. Հաճախորդին անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Հաճախորդի անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Հաճախորդի վերջին աշխատատեղից,
- 5.4.5. ՀՀ-ում կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն, առկայության դեպքում,
- 5.4.6. Դիտավորյալ կատարված հանցագործությունների համար դատվածության վերաբերյալ տեղեկատվություն, առկայության դեպքում,
- 5.4.7. Տեղեկատվություն Հաճախորդի՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց հիման վրա հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ առնչվող անձանց ցանկերում ընդգրկված լինելու վերաբերյալ, առկայության դեպքում,
- 5.4.8. Տեղեկատվություն Հաճախորդի՝ դատարանի կողմից ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված լինելու վերաբերյալ, առկայության դեպքում,
- 5.4.9. Տեղեկատվություն Հաճախորդի՝ սնանկ ճանաչված լինելու, չմարված (չներված) պարտավորություններ ունենալու կամ սնանկության վերաբերյալ Դատարանի կողմից վարույթ ընդունված դիմումի առկայության մասին,
- 5.4.10. Տեղեկատվություն Հաճախորդի՝ ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված լինելու կամ նախկինում ներգրավված լինելու վերաբերյալ, առկայության դեպքում,

- 5.4.11. Տեղեկատվություն Հաճախորդի՝ ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ, առկայության դեպքում,
- 5.4.12. Տեղեկատվություն Հաճախորդի՝ հարկային, մաքսային կամ ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ, առկայության դեպքում:
- 5.4.13. Կառավարիչը վերապահում է իրեն իրավունք՝ Հաճախորդից պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն և/կամ ներկայացնելու հավելյալ հարցեր՝ Հաճախորդի ներդրումային պրոֆիլի, իրավական կարգավիճակի կամ ցանկացած այլ համապատասխանության գնահատման գործընթացի շրջանակներում:
- 5.5. Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ են համարվում ՀՀ ԿԲ կանոնակարգերով և սույն Կանոնակարգով պրոֆեսիոնալ հաճախորդ չհանդիսացող մնացած բոլոր հաճախորդները:

6. Ներդրումային հայտարարագիր

- 6.1. Հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված տեղեկությունները, Ընկերությունը պարտավոր է կազմել Ներդրումային հայտարարագիր Հաճախորդի համար, որը սահմանում է Հաճախորդի ցուցումները և սահմանափակումները:
- 6.2. Ներդրումային հայտարարագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Ընկերությունը չի կարող ձեռնարկել ներդրումային հայտարարագրին հակասող գործողություններ:
- 6.3. Ներդրումային հայտարարագիրը կազմվում է յուրաքանչյուր Հաճախորդի համար առանձին և պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկատվությունը՝
 - 6.3.1. Դրամական միջոցների կառավարման ուղղությունները և նպատակը, որոնք բխում են հաճախորդի ներդրումային ռիսկեր կրելու ցանկության և կարողության աստիճանից,
 - 6.3.2. Ներդրումային փաթեթի կազմի և կառուցվածքի սահմանափակումները:
- 6.4. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի կողմերից որևէ մեկի կողմից հայտարարագրի փոփոխման վերաբերյալ գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում հայտարարագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:
- 6.5. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի սահմանումը չի կարող արգելք հանդիսանալ նշված ժամկետի ընթացքում դրանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, այդ թվում՝ որոշակի ժամկետով այն կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նման գործողությունները բխում են Հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև Շահառուի) շահերից:
- 6.6. Ներդրումային հայտարարագրում փոփոխությունները և/կամ լրացումներ կատարվում են գրավոր՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7. Ռիսկերը եվ դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները

- 7.1. Ցանկացած ներդրում իր բնույթով պարունակում է ռիսկ, քանի որ այն կարող է հանգեցնել ինչպես եկամտի ստացման, այնպես էլ մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսական միջոցների կորստի՝ շուկայի փոփոխությունների, գնային տատանումների, իրավական կամ տնտեսական գործոնների ազդեցության արդյունքում:
- 7.2. Գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է Հաճախորդը: Ընկերությունը չի փոխհատուցելու Հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել Ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:
- 7.3. Հաճախորդը պետք է գիտակցի, որ նախորդ բարեհաջող փորձը կամ այլ անձանց ֆինանսական հաջողությունները կապված արժեթղթերի շուկայում ներդրումների հետ չեն երաշխավորում հետագայում նմանօրինակ արդյունքներ Հաճախորդի համար:
- 7.4. Հաշվի առնելով, որ ռիսկը հանդիսանում է շուկայական հարաբերությունների անբաժան և օբյեկտիվ բաղադրիչ, և դրանից ամբողջությամբ խուսափել հնարավոր չէ, Ընկերությունը պարտավորություն է ստանձնում ներդնել և պահել արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգ, որի նպատակն է՝ ռիսկերը հնարավորինս կանխատեսել, կանխարգելել և/կամ նվազեցնել՝ համապատասխանեցված Ընկերության և Հաճախորդների շահերին ու կիրառելի օրենսդրությանը: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղված հետևյալ հիմնական միջոցառումները.
 - 7.4.1. արժեթղթերի թողարկողների պարզ և ընդգրկուն վերլուծություն՝ ուշադրություն դարձնելով հատկապես հետևյալ գործոններին՝ փորձառու ղեկավար թիմի առկայություն, հստակ ռազմավարություն և գործարար ծրագիր, շուկայում աճի ու զարգանալու ներուժ, բարելավվող ֆինանսական ցուցանիշներ, պահանջարկի կայունություն, կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում և հաշվետվողականություն,
 - 7.4.2. Ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա,
 - 7.4.3. Դրամական միջոցների կառավարման հետ կապված ռիսկերի շարունակական մշտադիտարկում և Հաճախորդի անհապաղ իրազեկում՝ վերոնշյալի արդյունքում հայտնաբերված ցանկացած փոփոխության կամ հնարավոր փոփոխության վերաբերյալ (ներառյալ՝ նոր ռիսկերի ի հայտ գալը), որոնք կարող են գերազանցել Հաճախորդի ռիսկ կրելու պատրաստակամության և կարողության սահմանները:
 - 7.4.4. Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը՝ այդ թվում դրանց բացահայտումը, գնահատումը և վերահսկումը:

8. Հաճախորդի դրամական միջոցների ստացում եվ հաշվառում

- 8.1. Ընկերությունը պարտավոր է Դրամական միջոցների հավատարմագրային կառավարման ծառայության շրջանակներում ընդունված միջոցները պահել իր սեփական միջոցներից առանձին:
- 8.2. Հաճախորդների Դրամական միջոցները Պայմանագրի շրջանակում կարող են հաշվառվել Ընկերության կողմից Գործընկեր կազմակերպությունների մոտ Հավատարմագրային կառավարման նպատակով բացված առանձնացված հաշիվներում: Հաճախորդի ցանկության դեպքում միջոցները կարող են հաշվառվել նաև Հաճախորդի անունով Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվներում, պայմանով, որ Ընկերությունը Ծառայության իրականացման համար անհրաժեշտ իրավասություններ ստանա այդ հաշիվների նկատմամբ:
- 8.3. Ընկերության անունից Հաճախորդների Դրամական միջոցների հաշվառման համար բացված բանկային հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային հաշիվը նախատեսված է Ընկերության Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար:
- 8.4. Ընկերությունն իրականացնում է նաև Հաճախորդի Դրամական միջոցների առանձնացված ներքին հաշվառում:
- 8.5. Եթե Ներդրումային հայտարարագրով սահմանված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում ներդրումների իրականացման հնարավորություն, ապա այդ արժեթղթերի պահառության նպատակով Հաճախորդը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացում է արժեթղթերի սեփական հաշիվ, որի վավերապայմանները Պայմանագրի կնքման պահին տրամադրվում են Ընկերությանը:
- 8.6. Ընկերության կողմից Հավատարմագրային կառավարման ենթակա դրամական միջոցները ստացված են համարվում սույն Կանոնակարգի 7.2. կետով սահմանված հաշիվներին մուտքագրման պահից:

9. Դրամական միջոցների կառավարման գործընթացը

- 9.1. Դրամական միջոցների կառավարումն իրականացվում է հետևյալ փուլերով՝
 - 9.1.1. Ընկերության աշխատակիցներն իրականացնում են ֆինանսական շուկաների և առանձին ֆինանսական գործիքների վերլուծություն տարբեր աղբյուրներից ստացված հասանելի հրապարակային տեղեկությունների հիման վրա:
 - 9.1.2. Հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա՝ աշխատակիցը կայացնում է ներդրումային որոշումներ, որոնք սույն Կանոնակարգի պահանջների համաձայն ենթակա են գրանցման Ընկերությունում վարվող գրանցամատյանում: Աշխատակիցն ընդունված ներդրումային որոշումների հիման վրա կազմում և հաղորդում է ֆինանսական գործիքների գնման/վաճառքի հանձնարարականները և ի կատարումն ներկայացնում Գործընկեր կազմակերպություններին:
 - 9.1.3. Ընկերության աշխատակիցները իրականացնում են Հաճախորդների Հավատարմագրային կառավարման օբյեկտի ընթացիկ ռիսկերի ամենօրյա մոնիտորինգ, ներդրումային հայտարարագրից շեղման կամ առանձին կարևոր տեղեկությունների ի հայտ գալու պարագայում աշխատակիցը իրականացնում է լրացուցիչ վերլուծություն, որի հիման ընդունվում են ներդրումային որոշումներ:

9.1.4. Ներքին վերահսկողության նպատակներից ելնելով, Ընկերության կողմից կատարվում է Հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառման նպատակով Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվների նկատմամբ ընթացիկ վերահսկողություն:

10. Ընկերության գործողությունների սահմանափակումը

10.1. Ընկերությանն արգելվում է.

- 10.1.1. Դրամական միջոցների կառավարման գործունեությունը կարգավորող կանոնների պահանջների, ինչպես նաև Պայմանագրի դրույթների խախտմամբ գործունեություն իրականացնել, այդ թվում՝ կնքել և կատարել գործարքներ,
 - 10.1.2. Դրամական միջոցների կառավարման համար ընդունել միջոցներ, որոնք ՀՀ գործող օրենսդրության համաձայն չեն կարող լինել կառավարման օբյեկտ,
 - 10.1.3. Դրամական միջոցների կառավարման համար ընդունված միջոցները գրավ դնել կամ դրանցով ապահովված երաշխիքներ տալ՝ առանց Հաճախորդի հետ կնքված գրավոր համաձայնության,
 - 10.1.4. Դրամական միջոցների կառավարման համար ընդունված միջոցները ցանկացած կերպ օգտագործել ի շահ իրեն և/կամ երրորդ անձի օգտին կամ դրանց տիրապետման իրավունքը պատվիրակել երրորդ անձի, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրով:
- 10.2. Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցում է նաև երրորդ անձանց, որի արդյունքում Ընկերության և Հաճախորդի, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների միջև կարող է առաջանալ շահերի բախում:
- 10.3. Պայմանագրի շրջանակներում Ընկերության և Հաճախորդի շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Ընկերությունն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել իր շահերի նկատմամբ Հաճախորդի շահերի գերակայության սկզբունքը:
- 10.4. Ընկերության տարբեր հաճախորդների միջև շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Ընկերությունն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել հաճախորդների նկատմամբ հավասարության և արդարության սկզբունքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաճախորդի հետ կնքված Պայմանագրով և Ներդրումային հայտարարագրով սահմանված պայմանները:
- 10.5. Ընկերության կողմից իր հաշվին գործարքներ կատարելիս Հաճախորդի շահերից և ներդրումային հայտարարագրի պահանջներից բխող Դրամական միջոցների կառավարման համար ընդունված միջոցներով կատարվող գործարքները ենթակա են առաջնահերթ կատարման:
- 10.6. Հաճախորդների հաշիվներով գործարքներ իրականացնելիս Ընկերությունը պետք է հիմնվի գործարքների արդար բաշխման սկզբունքի վրա՝ առանց որևէ հաճախորդի առաջնահերթության իրավունքի տրամադրման: Արժեթղթերում ներդրումներ իրականացնելիս Ընկերությունը պետք է ապահովի, որ մասնակցության հնարավորություն ընձեռնվի այն բոլոր Հաճախորդներին, որոնց համար տվյալ արժեթուղթը նպատակահարմար

Է և/կամ նախատեսված Է Ներդրումային հայտարարագրով: Եթե Ընկերության ձեռք բերած արժեթղթերի ծավալն այնքան մեծ չէ, որ ապահովվի բոլոր հաճախորդների լիարժեք մասնակցությունը տվյալ առաջարկում, ապա վերջինս պետք է արժեթղթերում ներդրումներ կատարի համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր Հաճախորդի համար կազմված ներդրումային որոշման մեջ պարունակվող համապատասխան արժեթղթի ծավալի (քանակի):

11. Կառավարման վճարը եվ հաջողության պարգևավճարը

- 11.1. Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդը վճարում է Ընկերությանը՝ համաձայն վերջինիս կողմից հաստատված սակագների:
- 11.2. Հավատարմագրային կառավարման սակագները սահմանվում են Ընկերության Հաճախորդի միջև կնքվող Պայմանագրով կամ Ընկերության ներքին իրավական ակտերով:
- 11.3. Կառավարման վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օրվա և/կամ Պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ:
- 11.4. Ընկերության և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրով կարող է սահմանվել նաև հաջողության պարգևավճարի վճարում՝ տարվա ընթացքում Հավատարմագրային կառավարման արդյունքում գրանցված՝ Հաճախորդի Դրամական միջոցների հավելածի նկատմամբ՝ արտահայտված տոկոսներով:
- 11.5. Կառավարման վճարը և հաջողության պարգևավճարը վճարվում են Պայմանագրով սահմանված ժամկետում:
- 11.6. Կառավարման վճարը և հաջողության պարգևավճարը, ինչպես նաև Ընկերության կողմից կատարված՝ Ծառայություններին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը, Հաճախորդի կողմից փոխանցվում են Ընկերության կողմից նշված հաշվին կամ Ընկերության կողմից անակցեպտ հիմունքներով գանձվում են Հաճախորդի ներդրումային փաթեթում առկա ակտիվներից:

12. Հաճախորդներին տրամադրվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը եվ ձևվը

- 12.1. Ընկերությունը պարտավոր է ցանկացած պահի Հաճախորդի պահանջով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա համար իր հաճախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել Դրամական միջոցների հավատարմագրային կառավարման մասին հաշվետվություն, որն առնվազն պետք է ներառի.
 - 12.1.1. Ընկերության անվանումը,
 - 12.1.2. Հաճախորդի Դրամական միջոցների կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը,
 - 12.1.3. Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում՝ Հաճախորդի դրամական միջոցների հաշվեկշիռը,
 - 12.1.4. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տարեկան եկամտաբերությունը,

- 12.1.5. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարները՝ տալով դրանց բացվածքն առնվազն ըստ Ծառայության դիմաց գանձվող վճարի և գործարքների կնքման համար կատարված ծախսերի,
- 12.1.6. Կառավարման եկամտաբերության համեմատումը Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված հենասկզբի հետ (նման հենասկզբի առկայության դեպքում),
- 12.2. Սույն Կանոնակարգի 11.1. կետով սահմանված հաշվետվությունը տրամադրվում է Հաճախորդի պահանջը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (պահանջի առկայության դեպքում), ինչպես նաև մինչև յուրաքանչյուր ամսվանը հաջորդող ամսվա 15-ը:
- 12.3. Եթե Հաճախորդը նախընտրել է ստանալ փաթեթի կառավարման մասին հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր գործարքի, ապա, ի լրումն սույն Կանոնակարգի 11.1. կետով սահմանված հաշվետվության, Ընկերությունը պարտավոր է իր հաճախորդին Էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել նաև հաշվետվություն Հավատարմագրային կառավարման շրջանակներում կնքված յուրաքանչյուր գործարքի (պատվերի) մասին՝ մինչև գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:
- 12.4. Սույն Կանոնակարգի 11.3 կետերով սահմանված՝ Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝
- 12.4.1. Ընկերության անվանումը,
- 12.4.2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,
- 12.4.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- 12.4.4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,
- 12.4.5. Հաճախորդի կողմից տրված հանձնարարականը,
- 12.4.6. Գործարքի կնքման վայրը,
- 12.4.7. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- 12.4.8. Հանձնարարականում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- 12.4.9. Հանձնարարականի բնույթը, եթե նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- 12.5. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են Էլեկտրոնային փոստի միջոցով, ապա դրանց ներկայացման պահ է համարվում Ընկերության Էլեկտրոնային փոստի ելքային նամակագրության բաժնում տվյալ հաշվետվության՝ որպես ուղարկված նամակ գրանցման պահը:
- 12.6. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են փոստով, դրանց ներկայացման պահ է համարվում փոստային ծառայության կողմից տրված անդորրագրի վրա նշված ամսաթիվը: Անդորրագիրը կցվում է հաշվետվության՝ Ընկերությունում պահվող օրինակին:

- 12.7. Առձեռն եղանակով տրամադրվող հաշվետվությունները Հաճախորդին են տրվում երկու օրինակից: Հաճախորդը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Ընկերությանը: Հաճախորդի կողմից հաշվետվության՝ Ընկերությունում պահպանվող օրինակի վրա ստորագրելու պահից հանդիսանում է հաշվետվության ներկայացման պահ:
- 12.8. Ընկերության՝ լիցենզիայի դադարեցումը հիմք չէ հաշվետվությունը Հաճախորդին չտրամադրելու համար: Լիցենզիան ուժը կորցրած կարող է է ճանաչվել բացառապես Օրենքով սահմանված կարգով: